սոքիկ խնդիրք և քեզ յիշատակ յաւիտենական մնասցէ յԱթոռոյս։ Եւ գրեցեալ խնդիրքն և Հրամանքն են տասն և չորք։ Որք են այսոքիկ նախ՝ թէ որպէս առաջնոց թագաւորաց ազգամօքն հաստատեալ է, զի Էջմիածնի Խալիֆայն և ամենայն իւր միաբանքն և մարդիկքն և ամենայն մուլքն յամենայնի մաքաֆ լիցին, և ոչ ոք իշխեսցէ պահանջել ի նոցանէ զդինար մի, և ամենայն արտօրայք և մասիլք նոցին ոչ չափիցին, նոյնպէս և այժմ լիցի։ Երկրորդն՝ թէ յԵրեւանու երկրէն թէ Հայք և թէ տաճիկք եթէ ի յԷջմիածնի հողն զսերմ ինչ սերմանիցեն, զմուլքն տայցեն Խալիֆային՝ որպէս օրէն է։ Երրորդն՝ թէ զզանգակ՝ զկոչնակ համարձակ ծեծեսցեն Հայք ի յԷջմիածին և ի վանօրայս և յամենայն յեկեղեցիս, ուր և իցեն, զմեռեալս իւրեանց համարձակ բարձցեն, զժամ կոչեսցեն, բարձրաձայն ժամ ասասցեն թէ ի վանօրայս և թէ ի յեկեղեցիս՝ ոչ ոք լիցի խօսող և ներհակ, զի ի բնէ կանոն է ըստ հրամանի թագաւորայ։ Չորրորդըն՝ թէ զմուլքսն Էջմիածնի, թէ այնք՝ որք վախմ են, և թէ այնք՝ զորս դրամով են գնեալ, եթէ ոք ի զուր և խլաֆիշար զաւթեալ իցէ՝ յետս դարձուսցէ։ Հինգերորդն՝ թէ Խալիֆայի սարիշտային և գործոյն մի ոք հակառակիցի, ոչ վարդապետք, ոչ քահանայք, ոչ աշխարհականք, ոչ Հայք և ոչ տաճիկք։ Վեցերորդն՝ թէ ի վրդովեալ ժամանակսն, ոմանք զինչս բերեալ ամանաթ[1]) ի յաթոռս, յորոց զոմանս տերքքն տանեն, զոմանս երկրի իշխողքն զաւթեն, և ոմանք աստ և անդ փչանան։ Յետոյ տերքն նոցին թէ տանողքն և թէ ոչ տանողքն գան դաւի առնեն։ Հրամայեմ զի մի՛ լիցի այսպէս։ Եօթներորդն թէ՝ եթէ ոք Էջմիածնի զմուլք ինչ ծախեալ իցէ և կամ վախմ տուեալ, յետ մեռանելոյ նորին ազգականք նորին զդաւա մի արասցեն, ոչ վասն ծախեցելոյն և ոչ վասն վախմիցն։

Ութերորդն՝ եթէ տաճիկք թամասսուք-ով[2]) զդրամ և կամ զայլ ինչ տալոց իցեն Էջմիածնի, և ոչ տան, դու բէկլար բէկի, առցես և տայցես Էջմիածնի։ Իններորդն՝ տաճիկք բռնութեամբ զհայս մի՛ տաճկացուսցեն։ Տասներորդն՝ թէ Էջմիածնի նուիրա-

---

[1]) Էմանէթ, աւանդ։ — [2]) Պարտամուրհակ։